

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>  
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

**Հարգելի՛ ուսուցիչ**

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:  
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի  
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ  
ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:**

1

**Ինչպե՞ս կարող է իրականացվել պաշտպանությունը:**

1. Կանխամտածված կամ հարկադրական:
2. Հարկադրական կամ նախանշված:
3. Նախատեսված կամ կանխատեսված:
4. Կանխատեսված կամ հարկադրական:

2

**Որո՞նք էականորեն չեն ազդում մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունների վրա:**

1. Տեղանքի պայմանները:
2. Հակառակորդի գործողությունների բնույթը:
3. Հարևան ստորաբաժանումների գործողությունների բնույթը:
4. Օրվա որոշակի ժամն ու եղանակը:

3

**Քա՞նի տեսակի են բաժանվում հակահետևակային ականները ըստ գործողության:**

1. Ֆուգասային, բեկորային, գնդակային:
2. Ֆուգասային, գնդակային, հպումային:
3. Բեկորային, ֆուգասային, համակցված:
4. Գնդակային, բեկորային, պայթյունային:

4

**Որո՞նք են համագորային մարտի հիմնական տեսակները ըստ նպատակին հասնելու եղանակի:**

1. Պաշտպանություն, հարձակում, շրջափակում:
2. Պաշտպանություն, հարձակում, նահանջ:
3. Պաշտպանություն, հարձակում, հանդիպական մարտ:
4. Պաշտպանություն, հարձակում:

5

**Քա՞նի քայլ է կատարում 1րոպեում մարտի դաշտում զինվորը արագ քայլի ժամանակ:**

1. 130-140 քայլ:
2. 110-120 քայլ:
3. 120-130 քայլ:
4. 100-120 քայլ:

**6** Ի՞նչ է պարզում զինվորը որպես դետրային գործելու առաջադրանք ստանալով:

1. Տեղեկությունները հակառակորդի մասին, իր առաջադրանքը և խնդիրները, գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս, շարժման ուղղությունն ու արագությունը, ազդարարաման, գործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հետախուզությունն սկսելու ժամանակը:
2. Տեղեկությունները հակառակորդի մասին, ջոկի և իր խնդիրը, շարժման տեմպը, ազդարարաման, կառավարման գործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, դիտարկման արդյունքների զեկուցման կարգը, հետախուզության վարման ժամկետը:
3. Տեղեկությունները հակառակորդի մասին, ջոկի և իր խնդիրը, շարժման ուղղությունն ու արագությունը, դիտարկման հատվածը, գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս, դիտարկման արդյունքների զեկուցման կարգը, ազդարարաման, կառավարման գործակցության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հետախուզությունն սկսելու ժամանակը:
4. Տեղեկությունները հակառակորդի մասին, ջոկի և իր խնդիրը, շարժման ուղղությունն ու արագությունը, գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս, կառավարման գործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը, հետախուզության վարման ժամկետը :

**7** Որքա՞ն է <<ԿՁԱ>>/ԱԿՄ/ ավտոմատի արդյունավետ կրակ հեռավորությունը:

1. 500մ
2. 750 մ
3. 1000մ
4. 400 մ

**8** Ինչքա՞ն է ավտոմատի ոչ լրիվ քանդման նորմատիվը:

<u>գերազանց</u>	<u>լավ</u>	<u>բավարար</u>
1. 19 վրկ	21վրկ	23վրկ
2. 11 վրկ	12 վրկ	14 վրկ
3. 17 վրկ	19վրկ	21վրկ
4. 15 վրկ	17 վրկ	19 վրկ

9

Ո՞ր դեպքում անմիջապես չի դադարեցվում կրակը:

1. Հրամանատարական կետի վրա կարմիր դրոշի բարձրացման ժամանակ:
2. Հրամանատարական կետի վրա սպիտակ դրոշի բարձրացման ժամանակ:
3. Թիրախային դաշտում մարդկանց հայտնվելու դեպքում:
4. Թիրախային դաշտում կենդանիների հայտնվելու դեպքում:

10

Որքա՞ն է լիցքավորված Ֆ-1 ձեռքի նռնակի զանգվածը գրամներով:

1. 500գ
2. 450գ
3. 600գ
4. 550գ

11

Վաշտում ո՞ր դեպքում չի տրվում «Զգաստ» հրաման:

1. Վաշտի մյուս սպաների, ինչպես նաև ավագի և այլ ստորաբաժանումների զինձառայողների ժամանման դեպքում:
2. Գումարտակի սպաների ժամանման դեպքում:
3. Ջորամասի հրամանատարի ժամանման դեպքում:
4. Ջորամասի հերթապահի ժամանման դեպքում:

12

Ո՞ր դեպքում ժամապահը կարող է պահակապետին կանչել վերև կրակելով:

1. Անհաղթահարելի քնի պատճառով:
2. Հերթափոխի ժամկետը անցնելու պատճառով:
3. Ցուրտ եղանակի պատճառով:
4. Կապի միջոցների անսարք լինելու դեպքում:

13

Թվարկվածներից ո՞րը կարգապահական տույժի տեսակ չէ:

1. Արտահերթ վերակարգի նշանակում:
2. Նկատողություն:
3. Տրված կարգապահական տույժի հանում:
4. Խիստ նկատողություն:

14

Նշվածներից ո՞րը չի համարվում զինձառայության պատասխանատվության տեսակ:

1. Նյութական:
2. Քաղաքացիաիրավական:
3. Կարգապահական:
4. Վարչաիրավական:

15

Ո՞րն է շարքի լայնությունը:

1. Շարքերի միջև եղած հեռավորությունների և շարքերի ճակատային գծի ընդհանուր երկարությունը:
2. Շարքի թևերի միջև եղած հեռավորությունը:
3. Շարքերի ընդհանուր երկարությունը:
4. Շարքերի մինչև խորքը եղած հեռավորությունը:

16

Ո՞վ ժամապահին հերթափոխելու իրավունք չունի:

1. Դասակի հրամանատարը:
2. Պահակապետը:
3. Պահակապետի օգնականը:
4. Իր պահակադիրը:

17

Ո՞րը վաշտի հերթապահի ծառայողական փաստաթուղթ չէ:

1. Առավոտյան մարմնամարզության համար սահմանված համազգեստի նմուշներ:
2. Միանգամյա անցաթղթերի հաշվառման գիրք:
3. Մաքրելու համար վաշտին ամրակցված տարածքի գծապատկեր:
4. Մարտական պատրաստության պարապմունքների դասացուցակ:

18

**Ուլքե՞ր են համարվում լրտեսներ:**

1. Անձինք, որոնք գործում են գաղտնի կամ խաբեության ճանապարհով, հավաքում կամ փորձում են հավաքել տեղեկություններ կողմերից մեկի հսկած տարածքում՝ դրանք հետագայում հակառակ կողմին փոխանցելու համար:
2. Անձինք, որոնք չեն մտնում զինված ուժերի կազմի մեջ և գտնվում են ծառայողական գործուղումների մեջ՝ զինված ընդհարումների շրջանում:
3. Անձինք, որոնք գտնվում են մարտական գործողությունների շրջանում և չեն մտնում զինված ուժերի կազմի մեջ:
4. Հակառակորդ պետության հսկողության տակ գտնվող տարածքում մշտապես բնակվող անձինք են, որոնք մասնակցում են մարտական գործողություններին՝ վարձատրություն ստանալու ակնկալիքով:

19

**Ի՞նչ փաստաթղթով է կարգավորվում հիվանդների և վիրավորների կարգավիճակը:**

1. 1929թ. Ժնևի կոնվենցիայով:
2. 1907թ. Հաագայի կոնվենցիայով:
3. 1864թ. Ժնևի կոնվենցիայով:
4. Ժնևի 1949թ. I և II կոնվենցիաներով և 1977թ. լրացուցիչ արձանագրությամբ:

20

**Ուլքե՞ր են համարվում վարձկաններ:**

1. Տվյալ պետության քաղաքացիներ են, որոնք անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին՝ անձնական շահի նպատակով:
2. Անձինք, որոնք հատուկ հավաքվել և անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին՝ անձնական օգուտ քաղելու նպատակով:
3. Հակառակորդ պետության քաղաքացիներ են, որոնք հատուկ հավաքվել և անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին՝ անձնական օգուտ քաղելու նպատակով:
4. Հակառակորդ պետության հսկողության տակ գտնվող տարածքում մշտապես բնակվող անձինք են, որոնք մասնակցում են մարտական գործողություններին՝ վարձատրություն ստանալու ակնկալիքով:

21

Ե՞րբ է տեղի է ունեցել Հայիձորի ճակատամարտը:

1. 1734թ.
2. 1616թ.
3. 1727թ.
4. 1627թ.

22

Ե՞րբ է ազատգրվել Շուշին: Ինչպե՛ս է կոչվել այդ օպերացիան:

1. 1994թ. «Խաղաղ երկինք»
2. 1992թ. «Փոթորիկ անապատում»
3. 1992թ. «Զինվորական մարշ լեռներում»
4. 1992թ. «Հարսանիք լեռներում»

23

Քա՞նի հայորդի է մասնակցել Հայրենական պատերազմին:

1. 600 հազար հայորդիներ:
2. 500 հազար հայորդիներ:
3. 400 հազար հայորդիներ:
4. 700 հազար հայորդիներ:

24

Ե՞րբ է տեղի է ունեցել Ներսեհապատի ճակատամարտը:

1. 672թ.
2. 542թ.
3. 282թ.
4. 482թ.

25

Ի՞նչ է թույլատրվում օգտագործել այրվածքի դեպքում:

1. Ծակել այրվածքի բշտիկները:
2. Բուսական կամ կենդանական յուղ:
3. Այրված մասերին դնել սառը թրջոց:
4. Դնել ճնշող վիրակապ:

26

Վարակի ո՞ր խմբին է պատկանում տգային էնցեֆալիտը:

1. Մաշկային:
2. Արյունային:
3. Աղիքային:
4. Շնչառական:

27

Ինչպե՞ս է կատարվում զարկերակային արյունահոսության ժամանակավոր դադարեցումը լարանի /ծգուտի/ օգնությամբ:

1. Լարանը դնել վերքից վեր՝ կենտ ոսկրի վրա:
2. Լարանը դնել վերքից անմիջապես ներքև:
3. Լարանը դնել վերքից վեր՝ գույգ ոսկրի վրա:
4. Լարանը դնել վերքից անմիջապես վեր:

28

Ցրտահարության ի՞նչ աստիճաններ կան:

1. 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի:
2. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի:
3. Թեթև, միջին և ծանր աստիճանի:
4. Ընդհանուր, մակերեսային և խորքային:

29

Եթե ծառերի բները, քարերը, հին շինությունները ծածկված են մամուռով, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս:

1. Արևմտյան կողմը:
2. Հարավային կողմը:
3. Արևելյան կողմը:
4. Հյուսիսային կողմը:

30

Եթե կան հասունացած պտուղներ և մրգեր, ապա դրանք հորիզոնի ո՞ր կողմն են ցույց տալիս:

1. Արևելյան կողմը:
2. Հյուսիսային կողմը:
3. Հարավային կողմը:
4. Արևմտյան կողմը:



31

**Ո՞րն է կոչվում մագնիսական ազիմուտ:**

1. Աշխարհագրական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետը ընկած հորիզոնական անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):
2. Մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետը ընկած հորիզոնական անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):
3. Մագնիսական սլաքի հարավային ուղղության և մինչև նշանակետը ընկած հարթ անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):
4. Մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և մինչև նշանակետը ընկած դիրեկցիոն անկյունը (ժամացույցի սլաքի պտտման ուղղության):

32

**Ո՞ր դեպքում են մեկանգամյա ճառագայթահարումը անվանում սուր ճառագայթահարում:**

1. 250 Ռ:
2. 50 Ռ:
3. 100 Ռ:
4. 300 Ռ:

33

**Ինչպե՞ս է չափվում երկրաշարժի ուժգնությունը:**

1. MKD-74 սանդղակով:
2. MNK-74 սանդղակով:
3. MBK-62 սանդղակով:
4. MSK-64 սանդղակով:

34

**Քիմիական զենքի զինամթերքի ի՞նչ տեսակներ կան ըստ մարդու օրգանիզմի վրա ունեցած ազդեցության:**

1. Ընդհանուր, նյարդա-կաթվածային, մաշկաթարախային, հեղձուցիչ, հոգեքիմիական, գրգռիչ ազդեցության թունավոր նյութերը:
2. Ընդհանուր, նյարդա-կաթվածային, մաշկաթարախային, հեղձուցիչ, նավթամթերքներ, ազդեցության թունավոր նյութերը:
3. Ընդհանուր, նյարդա-կաթվածային, մաշկաթարախային, հեղձուցիչ, էթիլենգլիկոլեն, պանգոտիաներ, ազդեցության թունավոր նյութերը:
4. Ընդհանուր, հեղձուցիչ, էթիլենգլիկոլեն, նավթամթերք, ազդեցության թունավոր նյութերը:

35

**Որո՞նք են տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակները:**

1. Հրդեհներ, պայթյուններ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կենսապահովման կոմունալ համակարգերում, կենցաղային թունավորումներ:
2. Հրդեհներ և պայթյուններ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կենսապահովման կոմունալ համակարգերում, հիդրոդինամիկական վթարներ, շենքերի և կառուցվածքների հանկարծակի փլուզումներ:
3. Հրդեհներ, պայթյուններ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կոյուղու համակարգերում, հիդրոտերկրաբանական վթարներ, փլուզումներ, ավիավթարներ:
4. Հրդեհներ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, հիդրոդինամիկական վթարներ, հիդրոտերկրաբանական վթարներ:

36

**Քա՞նի անգամ կարող են նվազեցնել հարվածային ալիքի, լուսային ճառագայթման ազդեցությունը պարզագույն թաքստոցները՝ փակ ճեղքերը:**

1. 7-8 անգամ:
2. 5-6 անգամ:
3. 2,5-3 անգամ:
4. 10-12 անգամ:

37

**Որո՞շեղ քամու ճշգրտումը, եթե քամին ձախ կողային է և ուժգին: Նշանակետը գտնվում է 600 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿՁԱ ավտոմատից:**

1. 8 թիրախ դեպի ձախ:
2. 4 թիրախ դեպի աջ:
3. 4 թիրախ դեպի աջ:
4. 8 թիրախ դեպի ձախ:

38

Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին աջ կողային է և չափավոր:  
Նշանակետը գտնվում է 400 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿԱ-74 ավտոմատից:

1. 2 թիրախ դեպի աջ:
2. 1 թիրախ դեպի աջ:
3. 1 թիրախ դեպի ձախ:
4. 2 թիրախ դեպի ձախ:

39

Որոշել մինչև նշանակետը եղած հեռավորությունը, եթե նշանակետը 6 մ երկարությամբ զրահամեքենա է և փակվում է ճկույթով:

1. 150 մ
2. 200 մ
3. 300 մ
4. 120 մ

40

Որոշել նշանակետի բարձրությունը, եթե այն երևում է հեռադիտակի սանդղակի 5 փոքր բաժանքներով և գտնվում է 400 մ հեռավորության վրա:

1. 6 մ
2. 8 մ
3. 12 մ
4. 10 մ

41

Նշանակետի բարձրությունը 30 սմ է, այն գտնվում է 300 մ հեռավորության վրա: Որոշել անկյունային մեծությունը:

1.  $U = 0-02$
2.  $U = 0-03$
3.  $U = 0-01$
4.  $U = 0-04$

42

1:50000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 12 սմ, իսկ կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 15 սմ: Որոշել ուղիղ գծով և իրական երթուղով հեռավորությունները մետրերով և դրանց տարբերությունը:

1. 6000 մ, 7500 մ, 1500 մ
2. 15500 մ, 20000 մ, 4500 մ
3. 1200 մ, 1500 մ, 300 մ
4. 6500 մ, 7500 մ, 1000 մ

43

1:200000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 3 սմ, իսկ կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 5 սմ: Որոշել ուղիղ գծով և իրական երթուղով հեռավորությունները մետրերով և դրանց տարբերությունը:

1. 50000 մ, 80000 մ, 30000 մ
2. 20000 մ, 80000 մ, 60000 մ
3. 6000 մ, 18000 մ, 12000 մ
4. 6000 մ, 10000 մ, 4000 մ

44

Կայծակի փայլատակումից հետո, որոտի ձայնը դիտորդը լսեց 4 վրկ հետո: Որոշել կայծակի հեռավորությունը դիտորդից:

1. 1400 մ
2. 1320 մ
3. 1500 մ
4. 1220 մ

45

Մարդու հասակը 1,84 մ է: Որոշել նրա քայլի երկարությունը:

1.  $\tau = 0,83$  մ
2.  $\tau = 0,78$  մ
3.  $\tau = 0,80$  մ
4.  $\tau = 0,82$  մ

46

Հաշվել հակադարձ ազիմուտները, եթե մագնիսական ազիմուտները տրված են՝  $60^\circ$ ,  $275^\circ$ :

1.  $170^\circ$ ,  $105^\circ$
2.  $210^\circ$ ,  $125^\circ$
3.  $220^\circ$ ,  $165^\circ$
4.  $240^\circ$ ,  $95^\circ$

47

Միմյանցից 20 մ հեռավորության վրա գտնվող 2 հեռագրասյուները ծածկվում են քանոնի 5 մմ բաժանքով: Որոշել հեռագրասյուների հեռավորությունը դիտորդից :

1. 2000 մ
2. 2500 մ
3. 1500 մ
4. 200 մ

48

**Համապատասխանեցնել հայկական կամավորական ջոկատները՝  
հրամանատարներին:**

- |                        |               |
|------------------------|---------------|
| 1. Դրաստամատ Կանայան   | ա/ 1-ին ջոկատ |
| 2. Համագասպ Սրվանձտյան | բ/ 2-րդ ջոկատ |
| 3. Արշակ Գաֆավյան      | գ/ 3-րդ ջոկատ |
| 4. Անդրանիկ Օզանյան    | դ/ 4-րդ ջոկատ |

1. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
4. 3-դ, 2-գ, 1-բ, 4-ա

49

**Համապատասխանացնել մանրէաբանական զենքի մանրէների հարուցած  
հիվանդությունների տեսակները:**

- |                 |               |
|-----------------|---------------|
| 1. Մանրէները    | ա/ բժավոր տիֆ |
| 2. Վիրուսները   | բ/ կարդիոզ    |
| 3. Ռիկետսիաները | գ/ ժանտախտ    |
| 4. Սնկերը       | դ/ սև ծաղիկ   |

1. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
3. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
4. 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա

50

**Համապատասխանացնել տեղանքի տեսակները:**

- |                       |                  |
|-----------------------|------------------|
| 1. Ըստ ռելիեֆի        | ա/ կիսափակ       |
| 2. Ըստ բուսածածկույթի | բ/ միջին         |
| 3. Ըստ կտրտվածության  | գ/ տափաստանային  |
| 4. Ըստ դիտարկման      | դ/ հարթավայրային |

1. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ